

մասունք մեջ առ պատրիարքի վեհապետական աշխարհության
որմ պահապետական պատրիարք է և մատուցման մատուցման մատուցման
մատուցման պատրիարք ու պատրիարքության մատուցման մատուցման իրաց
ամբ ու ուժաւուն մատուցման պատրիարքության մատուցման պատրիարք իրաց

ՃԵՅԿԱՌԿԱԾ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԵՐ

1803 ՄԱՅԻՍԻ 18 1803-ի 13

Ք Ա Զ Բ Ե Բ Ի Խ Ո Ս Ի

Ես ու եւ ուսուցի ա մարդու պատուի իւղանութ ըստ
պատ մատուցման ըստ պատուի մատուցման մատուցման մատուցման
մատուցման մատուցման մատուցման մատուցման մատուցման

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք



աստ տարիների ընթացքում, պետական ծառաչութեամբ
կապուած, ես միջոց և պարտաւորութիւն եմ ունեցել
ճանապարհորդել Երևան, Ջարուր, Դարալազեազ, Հին Նախիջևան, Հին
Քուղազ, Ազուլիս, Ակեբսանդրապօլ, Ղարս, Ներքին և Վերին Բասին,
Ջիրակայ գիրեղերը և Ղագախ գաւառը, նոյնպէս Ճամախի իւր գաւառ
ու հանդերձ:

Անսահման ցանկութիւններից մինն է եղել կարելոցն չափ ընդար
ձակ զննողութեան և ուսումնամիրութեան առնել ազգային սովու-
թիւնները, աւանդութիւնները, երգերը այդ հայաշատ գաւառ ներում.

Համաձայն ցանկութեանս ես գրի եմ առել այն բագմագան և
բազմատեսակ նիւթերը հայ ազգի կեանքից, որոնց մի խոշոր քանա-
կութիւն մինչեւ այսօր անմշակ և անտիպ մուլով, միւս մասը կարո-
ղացել եմ լրագրութեան միջոցով մատուցանել հայ հասարակութեան
ընթերցող բաժնին: Վերջին կանդին են պատկանում իմ «Ճանապար-
հորդական նկատողութիւնք», ստուար աշխատասիրութիւնը և այլք
շատերը:

Այժմ ևս պատրաստելով սոյն հաւաքածուն՝ ազգային ներքին
կեանքից, տալիս եմ տպագրութեան, յայտնելով սակայն ընթերցողնե-
րին որ ժողովուած նիւթից այս կամ այն երգը, առածը ասուածը և
այն կարող են կցկուուր տպագրուած լինել, բաց դա ինձ չէ կարող
արգելք լինել նորից տպագրելու, քանի որ ես լիակատար իրաւունք
ունեմ օգտուելու շատ տարիների ընթացքում քաղած նիւթերից:

Նկարագրածս սովորութիւններից, որոնք ունին ազգային հասարակաց կեանքի մէջ պատմական խորութիւն շատերը աննկատելի կերպով արդէն մոռացուել են. ոմանք սակաւ առ սակաւ մոռացուում են կեանքի նոր հոսանքի ազգեցութեան տակ, ուրեմն մոռացուածք կարող է պահել միայն ղրականութիւնը.

S O Ն Ե Ր

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ

 արոց կեանքում Քրիստոսի ծնունդն և մկրտութիւնն ունին ամենասրբազան նշանակութիւն: Այդ տէրունական տօնը կատարում է ամենայն ջերմեռանդութեամբ, և նորան մասնակցում են անխտիր և՛ մեծը և՛ փոքրը, և՛ զրագէտը և՛ անգրագէտը, հովիւն ու քահանան և այլն:

Ո՞ւմ չէ լայտնի արգեօք, որ Յունվարի 5-ին. թաթախման երեկոյին, տիրացուները ժամաշապիկ հագած երկերկու, երեք երեք, երեմն և քահանայք, քաղաքներում պտտում են ծանօթ և անծանօթ տները «Այսօր տօն է» երգում ու վարձատրում: Կար ժամանակ, որ Ղակախի գաւառում երկերկու տիրացուները, ժամաշապիկ հագած, խուրջինը ձգած մի խոնարհ իշու վրայ, մի աւելի խոնարհ իշապան առաջ ձգած պտտում էին մի երկու շարաթով, գիւղից գիւղ. տնից տուն և «Եյսօր տօն է» երգելով՝ ժողովում էին ալիւր, ցորեն, գարի և այլն:

Քրիստոսի ծննդեան առթիւ հայ ժողովրդի բանաստեղծական ողին յօրինել է զանազան տեղերում ժողովրդական անպաճուճ երգեր:

Ծննդեան երեկոյին պատանիները խումբ խումբ պտտում են գիւղի տները և այն կարգով, որ նոցանից ներս է մտնում տուն մինը կամ երկուսը, իսկ մնացեալ խումբը բարձրանում է տան տանիքը և փոքրիկ ծակից կախում թուկով կամ գոտիկներով տոպուակ (Ղազախ, Աշտարակ և այլն) կամ գուլպայ (Ճարուք) կամ թթոց (սալա) մէջը վառ ճրադ. (Դարալեազագի խացիկ գիւղում) և խմբից մինը երգում է հետևեայը.